

ԿձԻՁ: Ասոր կը հանգիպինք միջին դարուն. եւ էր փոքրիկ անօթ՝ մանր բաներ եփելու կամ ջեռուցանելու (Վաստ. 206): Ճգնաւորի մը վզէն՝ տանջելու համար կը կախեն «աղբով լի կձիձ» (Վարք Հրց. ի Հյկզ.), այն է մեկէ աւելի, որ նշան է թէ մանր էին: Կձռձ անուամբ դեռ ծանօթ է ամանիկս ի Հայս, լայնաբերան, երկայնածեւ, գրեթէ հարթ կողերով:

Մասնան: Էր խոշոր պատառաքաղ մը, երեքժանի Հրէից մէջ (Ս. Թագ. Բ, 13. Ս. Մնց. ԻԸ, 17), եւ արեւմտեայց քով նոյնպէս, եւ կամ երկժանի (Գար. Բ, 1424): Իւր պաշտօնն յայտնի է հայ անուան մէջ, — համարմատ յն. *κρεάγροαին*, — որ է միս հանող կաթսայէն կամ սանէն: Տարակոյս չկայ՝ թէ մեր նախնիք ալ պէտք ունէին այս սպասին եւ կը գործածէին ուրիշ ազգաց պէս:

Շերեփ: Մեծ եւ երկայնաբուն զգալ, յիշուած միջին դարուն, եւ որ գուցէ իւր անունն իսկ տուած է Ժ դարուն ապրող Թաղէոս ակէացւոյ հօր «Շերեփայ» (Արժ. 264, '90): — Կը ծառայէր ոչ միայն կերակրները խառնելու, այլ եւ իբրեւ չափ՝ անոնց մէջ ձգելի հեղուկներու. ինչպէս «շերեփ մի ջուր», կամ «երկու եւ երեք շերեփ իւզ» (Ոոսկեփոր ի Հյկզ.): Նմա-